



**Արթուր Ռոբերտի ՊՈՂՈՍՅԱՆ**  
**ՀՀ վարչական դատարանի դատավոր,**  
**Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի ավագ դասախոս,**  
**իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ**

## **ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ լուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Իր հերթին, Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ լուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ թիվ ՀՕ-339-Ն օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 08.12.2011 թվականին, ուժի մեջ մտել՝ 19.01.2012 թվականին: Տվյալ օրենքով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը /այսուհետ նաև՝ Օրենք/ ենթարկվել է էական փոփոխությունների ու լրացումների, սակայն սույն հոդվածի շրջանակներում հիմնականում կանդիդատանք նոր ներմուծված «փաստաբանական մենաշնորհի» հիմնախնդիրներին: Ըստ որում, նույն օրենքի հետ փաթեթային կարգով միաժամանակ ընդունվել և ուժի մեջ է մտել նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ թիվ ՀՕ-341-Ն օրենքը, որով նոր խմբագրությամբ է շարադրվել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի /այսուհետ նաև՝ ՔԴՕ/ 40-րդ հոդվածի 1-ին մասը:

Այսպես, առանձնահատուկ ուշադրավ է Օրենքի 5-րդ հոդվածը, ըստ որի «1. Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

### 2. Փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝

1) խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը (այսուհետ՝ խորհրդատվություն):

2) ներկայացուցչություն, ներառյալ՝ ներկայացուցչությունը դատարանում (այսուհետ՝ դատական ներկայացուցչություն):

3) քրեական գործերով պաշտպանություն:

4) օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը:

3. Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝

1) մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի:

2) մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի:

4. Սույն հոդվածով նախատեսված քրեական գործերով պաշտպանությունը կարող է իրականացնել միայն փաստաբանը:

5. Փաստաբանական գործունեություն չի համարվում փաստաբանի կողմից աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուին իրավաբանական օգնություն զույգ տարի, բազառությամբ փաստաբանի մոտ աշխատող փաստաբանի կողմից իրականացվող գործունեության:» /ընդգծումները կատարվել են հեղինակի կողմից/:

Իր հերթին, ՔԴՕ գործող 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանում ներկայացուցիչ կարող է լինել դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացի, բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

*Ելնելով վերոնշյալ իրավական նորմերի պահանջներից՝ կարելի է եզրահանգել, որ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնության արդյունքում ՀՀ Ազգային ժողովը որդեգրել է այնպիսի քաղաքականություն, որով դատական ներկայացուցչության բնագավառում ներմուծվել է, այսպես կոչված, «փաստաբանական մենաշնորհ».* տվյալ եզրույթով ընդունված է նշել այն ինստիտուտը, որը սահմանում է դատավարության մասնակիցների ձևական /ֆորմալ/ պարտականությունը դիմել փաստաբանների ծառայություններին և միայն նրանց միջոցով որոշակի ատյաններում կամ դատավարության որոշակի փուլերում վարել իրենց գործերը<sup>1</sup>: Ըստ որում, քաղաքացիական դատավարական ներկայացուցչության ոլորտում «փաստաբանական մենաշնորհը» հետագայում ներմուծելու անհրաժեշտության առաջարկությունը մեր կողմից կատարվել է դեռևս 2003 թվականին՝ «դրանով իսկ գործով շահագրգռված վստահորդների իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության իրացման իրավունքը մի շարք բացառություններով վերապահելով միմիայն փաստաբաններին, որոնք, անկասկած, մյուս ներկայացուցիչներից ավելի արդյունավետ կպաշտպանեն վստահորդների շահերը և ավելի որակյալ իրավաբանական օգնություն կցուցաբերեն նրանց:»<sup>2</sup>:

*Ամենից առաջ հատկանշական է այն հանգամանքը, որ տվյալ բնագավառում բարեփոխումներն անհրաժեշտ է սկսել ոչ թե «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքից, այլ և **ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերից** /տվյալ երկու օրենսգրքերի «Ներկայացուցչություն» ինստիտուտին վերաբերող գլուխներն ամբողջությամբ ենթակա են վերլուծության, փոփոխության և լրացման/, քանի որ ՀՀ դատարաններում քաղաքացիական կամ վարչական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՔԴՕ-ով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով /այսուհետ նաև՝ ՎԴՕ/, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական կամ վարչական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն ՔԴՕ-ին կամ ՎԴՕ-ին /ՔԴՕ 1-ին հոդվածի 1-ին մաս, ՎԴՕ 2-րդ հոդվածի 1-2-րդ մասեր/: Ուստի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում ընդգրկված քաղաքացիական կամ վարչական դատավարության իրավունքի նորմերը*

<sup>1</sup> Տե՛ս Ա.Ռ. Պողոսյան «Ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում», Երևան 2003, էջ 332:

<sup>2</sup> Տե՛ս Ա.Ռ. Պողոսյան, հիշյալ աշխատություն, 334-335 էջեր:

պարզապես կարող են չգործել՝ ՔԴՕ-ում և ՎԴՕ-ում այլ իրավակարգավորումների առկայության պայմաններում: Ինչ վերաբերում է «փաստաբանական մենաշնորհ» ինստիտուտը կանոնակարգող իրավական նորմերի ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ և 20-րդ հոդվածի 1-ին մասերին հակասության և անվավերության հարցին, ապա այդ հարցին համապատասխան վարույթի շրջանակներում կարող է սպառիչ պատասխանել միայն ՀՀ սահմանադրական դատարանը և սույն հոդվածի շրջանակներում գերծ կմնանք իրավական գնահատականներից:

Իսկ ՔԴՕ 40-րդ հոդվածի 1-ին մասը, մեր կարծիքով, շարադրվել է ոչ ծիշտ խմբագրությամբ, քանի որ քաղաքացիական գործով դատարանում ներկայացուցիչ կարող է լինել ոչ թե միայն փաստաբանը, այլև դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացի, բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի. դրանք են՝ մերձավոր ազգականի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու և մերձավոր ազգականին կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերը:

Ինչպես երևում է, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերը, որպես բացառություն, չեն վերաբերում «փաստաբանական մենաշնորհ» ինստիտուտին: Ավելին, ՔԴՕ 40-րդ հոդվածի 1-ին մասը, որպես ներկայացուցիչ, ճանաչում է ցանկացած գործունակ քաղաքացու, այլ ոչ թե միայն փաստաբանին: Այս պայմաններում քաղաքացիական գործերով դատական պրակտիկայում անհնար է կիրառել «փաստաբանական մենաշնորհ»՝ դատական ներկայացուցչության ինստիտուտի բնագավառում:

Բացի այդ, Ս.Ա.Խալատովն իրավագիտորեն նշում է, որ հիմքեր չկան պնդելու, որ իրավաբանական անձինք չեն կարող լինել ներկայացուցիչներ<sup>3</sup>: Իհարկե, դատարանում իրավաբանական անձ հանդիսացող ներկայացուցչի անունից կարող է հանդես գալ միայն ֆիզիկական անձը: Տեղին է նկատել, որ ժամանակակից դատական պրակտիկան թույլատրում է իրավաբանական անձին օժտել դատավարական ներկայացուցչի լիազորություններով: Այսօր էլ բավականին տարածում են գտել հենց սահմանափակ պատասխանատվությամբ կամ բաժնետիրական ընկերությունների /իրավաբանական գրասենյակների/ հետ հանձնարարության պայմանագրերի կնքման դեպքերը, երբ իրավաբանական անձի ղեկավարը /գործադիր մարմին հանդիսացող տնօրենը/ իրավաբանական անձի անունից ստանձնում է դատարանում վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, այսինքն՝ ներկայացուցչություն իրականացնելու պարտավորություն: Այնուհետև հանձնարարության պայմանագրի կնքումից հետո նույն տնօրենը տրամադրում է կոնկրետ անձին լիազորագիր, բայց արդեն իրավաբանական անձ հանդիսացող ներկայացուցչի անունից հանդես գալու համար:

Քննարկվող թեմայի շրջանակներում գտնում ենք նաև, որ գործող ՔԴՕ-ն անհրաժեշտ է լրացնել նոր 40.1-րդ հոդվածով՝ հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 40.1. Այն անձինք, ովքեր չեն կարող ներկայացուցիչներ լինել քաղաքացիական դատավարությունում**

Քաղաքացիական դատավարությունում ներկայացուցիչներ չեն կարող լինել՝

- 1) անչափահաս կամ խնամակալության, հոգաբարձության տակ գտնվող, դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.
- 2) դատարանի վճռով ծնողական իրավունքներից զրկված անձինք՝ որպես իրենց զավակների օրինական ներկայացուցիչներ մասնակցելու դեպքում.
- 3) դատավորները, դատախազները, քննիչները, հետաքննություն կատարող անձինք: Այս կանոնը տարածվում է նաև այն անձանց նկատմամբ, որոնք մասնակցել են տվյալ գործի հետ կապված այլ գործի՝ որպես վերը նշված պաշտոնատար անձինք: Այս կանոնը չի տարածվում տվյալ անձանց վրա, երբ

<sup>3</sup> Стів Халатов С.А. Представительство в гражданском и арбитражном процессе. М., Норма, 2002, էջ 88:

նրանք դատավարությունում հանդես են գալիս որպես համապատասխան մարմնի լիազորներ կամ որպես օրինական ներկայացուցիչներ.

- 4) փաստաբանների ցուցակից հանված կամ փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցված անձինք բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք մասնակցում են գործի վարույթին որպես այն քաղաքացու, իրավաբանական անձի, հիմնարկի, ներկայացուցչության, մասնաճյուղի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ, որտեղ կամ որի մոտ աշխատում են աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև այն դեպքերում, երբ դատավարությունում հանդես են գալիս որպես օրինական ներկայացուցիչներ.
- 5) այն անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված հանձնարարության պայմանագրին ներկայացվող պահանջների խախտմամբ են ստանձնել իրավաբանական օգնության ցուցաբերման հանձնարարությունը.
- 6) այն անձինք, ովքեր մասնակցել կամ մասնակցում են տվյալ գործին կամ տվյալ գործի հետ կապված այլ գործին՝ որպես կասկածյալ, մեղադրյալ (ամբաստանյալ), դատապարտյալ, արդարացված, տուժող, քաղաքացիական հայցվոր, քաղաքացիական պատասխանող, փորձագետ, վկա, մասնագետ, թարգմանիչ, դատական նիստի քարտուղար կամ ընթերակա.
- 7) այն անձը, որը տվյալ գործով ներկայացրել կամ ներկայացնում է գործին մասնակցող այն անձի իրավունքներն ու օրինական շահերը, որոնք հակասում են նոր ներկայացվողի շահերին, կամ եթե առկա են հիմնավոր կասկածներ պնդելու, որ ներկայացուցիչը շահագրգռված է գործի՝ հակառակորդ կողմի համար բարենպաստ ելքով.
- 8) այն անձը, որը նույն կողմերի միջև, նույն առարկայի վերաբերյալ վեճի լուծմանը մասնակցել է որպես արբիտրաժային տրիբունալ, եթե քաղաքացիական գործը կապված է նախկինում քննված վեճի հետ.
- 9) այն անձինք, որոնք օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել են դատարանում ներկայացուցչության գործունեությամբ զբաղվելու իրավունքից:»:

*Օրենսդիրը, վերապահելով դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը, որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն, միայն փաստաբաններին, նման արտոնություն չի վերապահել Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործունեության մյուս բնագավառներում, մասնավորապես, խորհրդատվության և վկային իրավաբանական օգնություն ցուցաբերելիս: Այսինքն՝ հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ, օրինակ, վստահորդին խորհրդատվություն /ներառյալ՝ վստահորդին նրա իրավունքների և պարտականությունների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելը, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը/ տրամադրի ոչ փաստաբանը, իսկ դատական ներկայացուցչություն իրականացնի արդեն փաստաբանը: Փաստորեն, քաղաքացիական կամ վարչական գործով փաստաթղթերը կարող է ուսումնասիրել, հայցադիմումը և միջնորդությունները կազմել ոչ փաստաբանը, որպիսի պարագայում, մեր կարծիքով, արդեն իսկ կատարված է վստահորդին ցուցաբերվող իրավաբանական օգնության ծավալի մեծ մասը. ցանկացած քաղաքացիական կամ վարչական գործով «հաղթելու» գրավականն առաջին հերթին պայմանավորված է իրավաբանորեն գրագետ ձևակերպված հայցադիմումով և միջնորդություններով: Տվյալ պարագայում դատարանում օբյեկտիվորեն «բարդանում է» փաստաբանի աշխատանքը, որը ստիպված է արդեն պաշտպանել այն հայցադիմումը կամ միջնորդությունը, որն ինքը չի կազմել: Արդյունքում դա կարող է հանգեցնել վստահորդի համար անբարենպաստ իրավական հետևանքների:*

*Ի դեպ, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դատական ներկայացուցչության իրականացումը փաստաբանի կողմից, որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն, իր հետ առաջ է բերում բազմաթիվ խնդիրներ: Նախ՝ քաղաքացիական և վարչական դատավարությունում*

հենց դատարանն է պարտավոր անդրադառնալ լիազորված անձի կողմից մատուցվող ծառայության տեսակին՝ որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն: Երկրորդ՝ առկա չէ այն կառուցակարգը, որի միջոցով դատարանը կարող է հստակորեն պարզել մատուցվող ծառայության պարբերական կամ վճարովի լինելու փաստը /միայն հանձնարարության պայմանագիր ներկայացնելու դատարանի պահանջը կամ այլ գործերով մասնակցությունը բավարար չէ/: Երրորդ՝ եթե փաստաբանական գործունեության վճարովիությանը նվիրված է Օրենքի 6-րդ հոդվածը, ապա պարզ չէ, թե ի՞նչ ի նկատի ունի օրենսդիրը «պարբերաբար» եզրույթի տակ /նեկից ավելի, սխտեմատիկ, թե այլ/: Դետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասից անհրաժեշտ է հանել <<պարբերաբար կամ վճարովի>> բառերը, որոնք հնարավորություն են ստեղծում ոչ փաստաբաններին շրջանցել սահմանափակումը և իրականացնել դատական ներկայացուցչություն:

Բացի այդ, հետագայում նպատակահարմար է քննարկել արտոնագրված փաստաբանների դասակարգման հարցը՝ արտոնագրված փաստաբանները, ըստ իրենց որակավորման, կարող են դասվել 1-ին, 2-րդ և 3-րդ դասերի /օրինակ, ԴԴ վճարելի դատարանում կարող են ներկայացնել շահերը միայն 1-ին դասի փաստաբանները/: Իսկ առավել կարևոր է «փաստաբանական մենաշնորհի» ներմուծման հետ մեկտեղ արտոնագրված փաստաբաններին վերապատրաստել ու առանձնացնել երեք մասնագիտացումներով՝ քաղաքագիական, վարչական և քրեական, ինչն էապես կնպաստի մատուցվող ծառայության որակի բարձրացմանը:

Սույն հոդվածի շրջանակներում առանձնահատուկ հիշարժան է նաև Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը, ըստ որի փաստաբանական գործունեություն չի համարվում փաստաբանի կողմից աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուին իրավաբանական օգնություն ցույց տալը, բացառությամբ փաստաբանի մոտ աշխատող փաստաբանի կողմից իրականացվող գործունեության: Այսպես, արտոնագրված փաստաբանը չի կարող դադարել փաստաբան հանդիսանալուց նույնիսկ աշխատանքային պայմանագրի առկայության և գործատուին մատուցվող ծառայության պայմաններում: Ինչ վերաբերում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձանց, հիմնարկներին, ապա գործող ՔԴՕ-ի և ՎԴՕ-ի իմաստով նրանք քաղաքացիական կամ վարչական դատավարությանը կարող են մասնակցել ոչ միայն աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող, գործը վարելու լիազորություն ունեցող աշխատողի, այլև ցանկացած գործունակ քաղաքացու միջոցով: Սակայն <<Փաստաբանության մասին>> ԴԴ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի իմաստով ոչ ֆիզիկական անձի ներկայացուցիչ դատարանում կարող է լինել նույնպես միայն փաստաբանը, բացառությամբ գործատուի մոտ փաստաբանի աշխատելու դեպքի:

Ի վերջո, 19.01.2012 թվականին ուժի մեջ մտած երկու օրենքների փաթեթից «դուրս է մնացել» ԴԴ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, որը, ի տարբերություն ՔԴՕ 40-րդ 1-ին մասի, չի նախատեսում վարչական դատավարությունում մասնակցող ներկայացուցիչների շրջանակը, ինչպես նաև այն անձանց շրջանակը, ովքեր չեն կարող ներկայացուցիչներ լինել վարչական դատավարությունում: Ստացվում է, որ վարչական դատավարությունում կիրառելի է «Փաստաբանության մասին» ԴԴ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված «փաստաբանական մենաշնորհը», քանի որ որևէ հակասություն առկա չէ /ՎԴՕ-ում առկա չէ համապատասխան իրավակարգավորում/: Իհարկե, «փաստաբանական մենաշնորհը» վարչական դատավարությունում տարածելի չէ անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու, իրավաբանական անձանց, սնանկ ճանաչված կամ լուծարվող իրավաբանական անձանց, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչության դեպքերում, որոնց վերաբերող ԴԴ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-10-րդ մասերի դրույթները նախատեսել են հստակ կարգավորումներ: Ի դեպ, ՎԴՕ-ում բացակայում է նաև ներկայացուցիչների

լիազորությունների տարանջատումն ընդհանուր և հատուկի այնպես, ինչպես ՔԴՕ 42-րդ հոդվածում:

Որպես եզրահանգում՝ նշենք, որ սույն հոդվածի շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ ներկայացուցչության ինստիտուտի բոլոր հիմնահարցերին, իսկ այդ ինստիտուտը թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական դատավարություններում եղել և մնում է առավել չկարգավորված և վիճահարույց դատավարական ինստիտուտներից՝ սկսած ներկայացուցչի դատավարական կարգավիճակից, վերջացրած նրա դատավարական իրավունքներով ու պարտականություններով, ինչն անխուսափելիորեն օրենսդրից և օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկող սուբյեկտից պահանջում է համալիր, բազմակողմանի վերլուծության ու կարգավորման անհրաժեշտություն<sup>4</sup>: Սակայն ներկայումս գործող իրավակարգավորումները համահունչ չեն իրավագիտության ձեռքբերումներին կամ նվաճումներին, և օրենսդրությունը, ինչպես նաև դատական պրակտիկան «հետ են մնում» տեսության զարգացման մակարդակից: Այս ամենն էլ, որպես հետևանք, կարող է առաջ բերել նոր օրենսդրական նախաձեռնություններ:

---

<sup>4</sup> Տե՛ս Ա.Ռ. Պողոսյան «Ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում», իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան 2005, 3-7 էջեր: